

պետութեան սահմաններէ մէջ էր գտնուում այդ ժամանակ և Անգեղ-տանի մի մասը, եթէ ոչ ամբողջ գաւառը : Անանուն հեղինակը գիտէր նոյնպէս Տարոնին և Անգեղ-տանը սահմանակից՝ Բագրատունիներին անձնատուր խոյր գաւառի բնակիչների մասին, թէ եւ նա չէ յիշում ուղղակի նոցա անունը և բաւականում է միայն ակնարկելով նոցա « բարբարոսութիւնը », — այդ լեռնականների բնորոշ յատկութիւնը, որ գիտել են ժ. դարու մեր մատենագիրները 1 :

Այստեղ արդէն կան այնպիսի հիմունքներ, որոնցից Անանունը կարող էր բխելական անունների մերձեցումներ անել, այն է՝ Անգեղ աստուծու և բարբարոս Բաշր ժողովրդի՝ Անգեղ-տանի և բարբարոս Հայ ցեղի հետ (խոյր) : Իսկ այն իրողութիւնից, որ Բազր ասուն ի ներքէ տիրել են, « Առաջին Հայքին », (Տարոն) և նորա հետ միասին գուցէ և Անգեղ-տանին, նա նոյնացրեց երկու անունների՝ Բագրատունիների կարծեցեալ նախահոր՝ Բագրատիւն, որի մէջ հեղինակը ոչ առանց հիմունքի աստուածութեան գաղափար էր անսնում (գուցէ Ազատագեղոսի ազգեցութեան ներքոյ 2), և Անգեղին, որի աստուածութիւնը հաստատուում էր Սուրբ Գրքից :

Անա թէ որպիսի ճարտար, հանճարեղ և բարդ զուգարութիւններ, սրբալիսի նուրբ կշառաստութիւններ և ծածկախորհուրդ կողմնակալ նպատակներ ենք մենք անսնում Անանունի Հայոց նահապետների անունների ընտրելու և յարմարցնելու մէջ, անունների՝ որոնք առաջին բերան երևում են՝ իբրեւ մէջ բերած մէկը միւսի հետքից միանգամայն պարզ և բնական կերպով՝ առանց որ և է յետին մտքի, անգամ և առանց նպատակի :

Թրքմ. 1. ԵԱԶԱՐԵԱՆՅ

Շարայարեղի

1. Թովմա Արժոյննի, էջ 120-121. Յովնան կարող էջ 150.

2. Տես Վենետ. հրատ. 1862. « գայր (Տրքատ) հասանէր է քաղաքագեղն Բագ-ուան, որ ա նուանեալ կոչի է պարթեական լեզուէն Գից-աւան 3 :

Լ Ե Զ Ո Ւ Ա Բ Ա Ն Ա Կ Ա Ն

ՀԱՅ ԼԵԶՈՒԻ Ե, Է, Ո, Օ ԳՐԵՐՈՒՆ ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆԸ

Բ Ա Զ Մ Ա Վ Է Պ Ի անցեալ տարուան օրոշուտի Սոչրհանդակով առաջարկուած էր հարցում մը հայերէն ե, է և ո, օ գրերուն հին ու նոր արտասանութեան եղանակի մասին. ներկայ յօդուածս ուղղակի պատասխան մը չէ թէ և նոյն հարցումին, սակայն անուղղակի կը շօշափէ դայն : Մեր ե, է, ո, օ տառերը տարբեր հնչուումներ ունեցած են անշուշտ հնապէս, ըստ որում տարբեր դիրքեր են. ո և օ գրերուն հնագոյն հնչումը որոշել զիւրին է. առաջինն իբրեւ պարզ օ, և երկրորդը՝ իբր աշ (կարգալ առ, աւ) : Աւելի զժուար է և ե կ. սակայն շատ ալ հաւանական է որ ասոնց տարբերութիւնը, տեսութիւնն եղած ըլլայ միայն. ե=կարձ է, իսկ է=երկար Է, ինչպէս կը ցուցնեն օտար տառագարձութիւնները, մասնաւորապէս յիշելով յն. Ե և Պ :

Նկատելի է թէ այլեայլ լեզուներու մէջ հնագոյն երկար Է յետոյ վերածուած է ի-ի. այսպէս անգղ. ee, հնապէս եե=Է և այժմ ի. — յուն. η, հին հնչումով Է և այժմ ի. այս երեւութիւն կը համաձայնի հայերէն է գրին ի-ի վերածումը հոլովեալ և ածանցական ձեւերու մէջ (սեր, սիրոյ, սիրել) ընդունելով է իբր Է :

Այսպէս թէ այնպէս, սոյն գրերը մեր նոր գրական ու գաւառական լեզուներուն մէջ առ հասարակ շփոթուած են. յօդուածիս բուն նպատակն է ուրեմն որոշել անոնց ուղղազրական կանոնները, եթէ երբեք կան, հիմնուելով զլիաւորապէս օրինակներու առատութեան վրայ :

Ե և է գրերը նախ երկու գիրք կրնան ունենալ. կամ կը գտնուին ձայնաւորի քով և կամ բաղաձայնի քով :

Երբ և ե կ ձայնաւորի քով գտնուին, անոնցմէ իւրաքանչիւրը կը պահէ իրեն հա-